ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱԳՈԳ ԳՅՈՒՂ

RA ARMAVIR DISTRICT
OF LERNAGOG

Ազատության 1
հեռախոս/0233-6-10-22/

Azatutyan 1.
tel. /0233-6-10-22/

N-66

08.06.2011թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան Պարոն Ղահրամանյան

Ուղարկվում է Արմավիրի մարզի Լեռնագոգ գյուղական համայնքի ղեկավարի 2011 թվականի մայիս ամսվա ընթացքում ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր-2-թերթ:

Լեռնագոգ համայնքի ղեկավար՝ Ս.Մարգարյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
Մուտքագրված 8558-11
06 09 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱԳՈԳ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 10

27 մայիսի 2011թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ 18.02-ի N 2-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2011 թվականի ապրիլի 6-ի թիվ 01/12/1045-11 գրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնագոգ գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի մայիսի 25-ի թիվ 5 նիստի 7-րդ որոշումով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արամվիրի մարզի Լեռնագոգ գյուղական համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 18-ի «Համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 2-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները:

1. որոշմամբ հաստատված N5 հավելվածում՝ «Իրավունքներ և պարտականություններ» բաժինը լրացնել նոր կետերով, համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Լեռնագոգ համայնքի ղեկավար՝ Ս.Մարգարյան

2011 թվական
մայիսի 27
գյուղ Լեռնագոգ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱԳՈԳ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 27-ի ԹԻՎ 10 ՈՐՈՇՄԱՆ

ԼՐԱՑՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ 18.02-ի N 2-Ա ՈՐՈՇՄԱՆ

1. Սահմանված կարգով արձանագրում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնագոգ գյուղական համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստերը, կազմում է համապատասխան եզրակացությունները և ներկայացնում է համայնքի ղեկավարին:
2. Սահմանված կարգով կազմակերպում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնագոգ գյուղական համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի աշխատանքներին առնչվող փաստաթղթաշրջանառությունը, համապատասխան գրանցամատյանների վարումը և դրանց պահպանումը: